Հայ պատմագրություն
5-րդ դարի պատմիչներ

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ

(մոտ 5-6 դարեր)

Ժամանակի առաջին պատմագրական հուշարձանը Ագաթանգեղոսի «Պատմութիւն հայոց» երկն է:

Ագաթանգեղոս հունարեն նշանակում է բարի հրեշտակ, բարի լրաբեր, Աստծո ուղարկած ավետաբեր: Պատմության հեղինակը, որի իսկական անունը հայտնի չէ, իր երկն ավելի արժանահավատ դարձնելու համար իրեն համարել է Տրդատ Գ թագավորի քարտուղարը: Օգտվելով այդ երկից՝ Պատմահայր Մովսես Խորենացին բազմիցս հիշատակել է նրա հեղինակին և գովաբանել իբրև «Տրդատի ճարտար քարտուղար»:

Ագաթանգեղոսի երկն ընդգրկում է հայ ժողովրդի պատմության մի շրջանը՝

3-րդ դարի վերջերից մինչև 4-րդ դարի առաջին երեսնամյակը: Հեղինակն օգտագործել է նաև բանավոր ավանդություններ: Նա «Պարսից պատերազմ» ավանդավեպից պատմում է Խոսրով և Տրդատ թագավորների մասին որոշ զրույցներ: Այնուհետև գրավոր և բանավոր աղբյուրների հիման վրա շարադրում է Գրիգոր Լուսավորչի վարքը, քրիստոնեական հավատի համար վերջինիս կրած բազում չարչարանքներն ու Խոր վիրապում բանտարկվելը:

Գրքի երկրորդ մասում պատմվում է Հռիփսիմյան կույսերի վկայաբանությունը՝ դարձյալ հիմք ընդունելով բանավոր ավանդությունները: Քրիստոնեություն ընդունած Հռիփսիմեն և Գայանեն, իրենց ընկերուհիների հետ հալածվելով, փախչում են դեռևս հեթանոս Բյուզանդիայից և հաստատվում Հայաստանում: Բայց այստեղ էլ նրանք հալածվում են և սպանվում Տրդատ արքայի հրամանով, որը նույնպես հեթանոսության հետևորդ էր:

Պատմության ամենաընդարձակ հատվածը ընդգրկում է Գրիգոր Լուսավորչի վարդապետությունը, որ քրիստոնեության հիմունքները պարունակող գովաբանական քարոզ է՝ գրված ճարտասանական հմտությամբ:

Մեծ արժեք է ներկայացնում հատկապես Պատմության չորրորդ բաժինը, որտեղ նկարագրվում է քրիստոնեության տարածումը Հայաստանում: Դա այդ մեծ իրադարձության վերաբերյալ առաջին ստույգ վկայությունն է՝ չնայած հրաշապատում դրվագների առկայությանը: Այստեղ չափազանց կարևոր տեղեկություններ են տրվում 4-րդ դարի սկզբին Հայաստանի ներքին կյանքի, հեթանոսական աստվածների ու նրանց պաշտամունքային վայրերի մասին:

Չորրորդ բաժնում է զետեղված Գրիգոր Լուսավորչի ընդարձակ տեսիլքը (երազը): Հայոց առաջին քրիստոնյա առաջնորդի առջև բացվել են երկնքի դռները, և Քրիստոսի լույսն իջել է Վաղարշապատում: Այստեղ էլ Լուսավորիչը կառուցել է տալիս հայ խոշորագույն եկեղեցին՝ Էջմիածնի Մայր տաճարը (այստեղ պարզ է դառնում Էջմիածին անվան իմաստը. էջ Միածին – իջավ Միածինը՝ Քրիստոսը):

Ագաթանգեղոսի Պատմության կենտրոնական դեմքը Գրիգոր Լուսավորիչն է: Վերջինս ոչ միայն ճարտար խոսքերով է ապացուցում իր անձնուրաց նվիրվածությունը քրիստոնեական հավատին, այլև իր կրած դաժան խոշտանգումներով:

Գրիգոր Լուսավորչի վարդապետության, ընդարձակ մենախոսությունների ու երկխոսությունների միջոցով քարոզվում ու ներբողվում է քրիստոնեական կրոնը, ներկայացվում է նոր՝ լուսավոր կրոնի վերջնական հաղթանակը հեթանոսության նկատմամբ, ինչպես նաև հիմնավորվում է Հայ եկեղեցու ազգային

ինքնուրույնությունը: Այս նպատակներն է հետապնդել հայ պատմիչը:

Գրիգոր Լուսավորչի նման անսպառ համբերությամբ ու տոկունությամբ օժտված վկայաբանական կերպարներ են նաև Հռիփսիմյան կույսերը: Նրանց հակադրված է հեթանոս Տրդատ արքան: Վերջինս ֆիզիկական հզոր ուժի տեր դյուցազուն է: Ագաթանգեղոսը տարբեր առիթներով պատմում է դրվագներ նրա քաջագործություններից: Բայց այդ նկարագրությունները պատմիչը կատարել է՝ ավելի շատ ցույց տալու համար, որ այդ մարմնապես ուժեղ մարդը թուլանում է հոգևոր ուժի առջև: Նա պարտվում է մի թույլ աղջկանից՝ իր հավատով զորացած Հռիփսիմեից, որին ձգտում է տիրանալ բռնի ուժով: Սա էլ քրիստոնեական հավատի մի յուրատեսակ քարոզ էր ու գովաբանություն:

Ագաթանգեղոսի Պատմությունը կարևոր սկզբնաղբյուր է եղել հետագա հայ պատմագրության համար: Այդ երկն ունի նաև որոշակի գեղարվեստական արժեք՝ հետաքրքիր զրույցների, կենդանի և աշխույժ շարադրանքի շնորհիվ: Հետևաբար այն սիրված ու տարածված է եղել ողջ միջնադարում: Լայնորեն տարածվել է նաև օտարների մեջ՝ թարգմանվել հունարեն, արաբերեն, հաբեշերեն, լատիներեն, վրացերեն:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞րն է 5-րդ դարի առաջին պատմագրական հուշարձանը: Ո՞վ է դրա հեղինակը:
2. Ներկայացրեք Ագաթանգեղոսի կյանքից հետաքրքիր դրվագներ, ապրած ժամանակաշրջանը:
3. Ներկայացրեք Ագաթանգեղոսի գրքի երկրորդ մասում պատմվող Հռիփսիմյան կույսերի վկայաբանությունը և մեկնաբանեք
4. Ինչ արժեք է ներկայացնում Ագաթանգեղոսի Պատմության չորրորդ բաժինը: Ըստ հատվածի՝ ներկայացրեք 4-րդ դարի սկզբին Հայաստանի ներքին կյանքը, հեթանոսական աստվածների ու նրանց պաշտամունքային վայրերի մասին:
5. Ներկայացրեք Գրիգոր Լուսավորչի ընդարձակ տեսիլքը (երազը):
6. Ո՞վ էր Ագաթանգեղոսի Պատմության կենտրոնական դեմքը՝ կերպարը, և ի՞նչ նպատակներ էր իրականացնում նա:
7. Վերլուծեք հեթանոս Տրդատ արքայի կերպարը քրիստոնեությունն ընդունելուց առաջ և հետո:
8. Ագաթանգեղոսը տարբեր առիթներով պատմում է դրվագներ Տրդատի քաջագործություններից: Բնագրից դուրս գրեք այդ հատվածները և ներկայացրեք նրա ֆիզիկական հզոր ուժը:
9. Ինչ նշանակություն ունի Ագաթանգեղոսի Պատմությունը հետագա հայ պատմագրության և գրականության համար, և ո՞րն է նրա գեղարվեստական արժեքը: Ներկայացրեք ձեր դիրքորոշումը: